ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/1

ք. Կապան «29» հոկտեմբեր 2020թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գնորգ Փարսյան, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Կապանի <<Նորոգշին >> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռազմիկ Փարսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ըստ Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող թերություններ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Մուտք կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցների և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ

աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **434450000** (չորս հարյուր երեսունչորս միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 72408333 (յոթանասուներկու միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 221450000 (երկու հարյուր քսանմեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 36908333 (երեսունվեց միլիոն ինը հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

3-րդ չափաբաժին 213000000 (երկու հարյուր տասներեք միլիոն) ՀՀ դրամ՝ որից 35500000 (երեսունհինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում, դրամական միջոցների փոխանցումը կատարված աշխատանքների դիմաց կատարվում է հետևյալ կերպ՝

5.3.1 գումարի 40տոկոսը վճարվում է համայնքային բյուջեից.

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողի կողմից սկզբում հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 40 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312512040՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

5.3.2 գումարի 60 տոկոսը վճարվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրի հիման վրա՝ պետական բյուջեից.

Կատարողի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 60 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312000491՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

Պատվիրատուի կողմից համայնքի մասնաբաժնով վճարում կատարվելուց հետո պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի և վճարային փաստաթղթերի պատճենները տարբերակները ներկայացվում են ՀՀ Սյունիքի մարզպետարան: Մարզպետարանի կողմից փաստաթղթերը համապատասխան մարմիններ ներկայացվելուց և հաստատվելուց հետո միայն պետական բյուջեից հատկացվում են ֆինանսական միջոցներ Համայնք կատարելով մարզպետարանին: Գումարը մարզպետարանի կողմից համայնքի բյուջետային հաշվին փոխանցվելուց հետո Գնորդի կողմից կատարվում է դրամական միջոցների փոխանցում Վաճառողին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արդիականացման փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրում այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[31] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ 900312512040 /40%, համայնք/	ՀՀ1150018295365380
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/	ՀՎՀՀ 09400653
ՀՎՀՀ 09426088	
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

29 հոկտ

Հավելված թիվ 1
2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 1

/հազար դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումարը
	Կապան համայնքի Գեղանուշ գյուղ տանող ճանապարհի վերանորոգում				
	Հատված կմ 0+000 - կմ 2+700				
	/.Նախապատրաստական աշխատանքներ				
1	Թփուտների կտրում ճանապարհի երկայնքով (նոսր քանակությամբ)	$մ^2$	3000	0.0075	22.5
	// Հողային աշխատանքներ				0
1	Ա/բ ծածկի քանդում էքսկ. 0,65 $մ^3$ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	604.3	3.7	2235.91
2	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	300	3.7	1110
3	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	12.8	7	89.6
4	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձում էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	100	3.7	370
5	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում)	$մ^3$	803.95	0.7	562.765
	III Կողնակներ և կողային առուներ				0
1	Կողնակների ամրացում ավազակոպիճով $h_{միջ.}$=5 սմ	$մ^2$	4486	0.43	1928.98
2	Կողային առուների իրականացում 10e IV բնահողում 0.65 $մ^3$ շ.տ., էքսկ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 12.0 կմ	$մ^3$	440	3.7	1628
3	Կողային առուների իրականացում 10e IV բնահողում ձեռքի աշխատանքով բարձում 0.65 $մ^3$ շ.տ., էքսկ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12.0 կմ	$մ^3$	19.9	7	139.3
	IV Երթևեկային մաս				0
1	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ	$մ^2$	12086.3	0.56	6768.3392
2	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000$մ^2$ տարածումով	$մ^2$	12086.3	2.4	29007.168
3	Մանրահատիկ ա/բ h=5 սմ	$մ^2$	12086.3	6.8	82186.976
	V Իջատեղեր և մուտքեր				0
1	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ, բարձում էքս. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	87	3.7	321.9

2	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	4.57	7	31.99
3	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	մ²	538.67	0.2	107.734
4	Խճային հիմքի տեղադրում h=12 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով	մ²	538.67	2.2	1185.074
5	Մանրահատիկ ա/բ h=5 սմ	մ²	538.67	6.8	3662.956
6	10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ³ շ.տ. կողքի կուտակումով (խողովակների փոսորակներ)	մ³	6	0.7	4.2
7	10eIV բնահողի քանդում ձեռքով, կողքի կուտակում (խողովակների փոսորակներ)	մ³	1.01	5	5.05
8	Մետ. d=325 մմ խողովակի տեղադրում (d=5մմ)	գծմ	35	35	1225
9	Միաձույլ բետոնե գլխամաս B-20	մ³	1.31	85	111.35
10	Գլխամասերի ջրամեկուսացում	մ²	10.7	1.8	19.26
11	Մետ. d=325 մմ խողովակի ջրամեկուսացում	գծմ	33	1.8	59.4
12	Ավազակոպճային շերտ h=10սմ (խողովակների տակ)	մ³	1.4	5.6	7.84
13	Հետադարձ լիցք	մ³	4.82	0.2	0.964
14	Ավելորդ բնահողի բարձում էքս. 0,65մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12կմ	մ³	2.19	3.7	8.103
	VI Վաքեր				0
1	Բետոնյա վաքերի մաքրում բնահողից ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	*5*	*7*	35
2	Բետոնյա վաքերի նորոգում միաձույլ բետոնով B-20	մ³	*0.5*	*85*	42.5
3	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ)	մ³	3.7	5.6	20.72
4	30x34սմ վաքերի ջրամեկուսացում	մ²	11.34	2	22.68
5	Ճ-1-20-50 վաքերի ջրամեկուսացում	մ²	61.75	2	123.5
6	30x34սմ վաքերի տեղադրում	մ³	0.72	140	100.8
7	Ճ-1-20-50 վաքերի տեղադրում	մ³	6.5	150	975
	VII Խողովակներ				0
1	Հունի մաքրում բնահողից ձեռքով՝ կողքի գցումով:	մ³	2	5	10
2	Մետ. d=325մմ խողովակների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	մ	4	3.4	13.6
	VIII Կահավորում				0
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	910	21.5	19565
2	Նոր ազդանշանային C1 տիպի պլաստիկ սյուների տեղադրում	հատ	81	50	4050
	Կապան քաղաքի Մ. Հարությունյան փողոցի նորոգման աշխատանքներ				
	I Երթևեկելի մաս				
1	Փոսային նորոգում (h=3-5սմ):	մ²	87	4	348
2	Փոսային նորոգում հիմքով. - խճային հիմք (h=8-16սմ) բիտումի տարածումով 4.12տ/1000մ² - մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	31	9	279
3	Գոյություն ունեցող քայքայված ծածկի (10eIV) քանդում $h_{միջ}$=15սմ էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում 9կմ լցակույտ:	մ³	473.2	3.6	1703.52

4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	95.4	7	667.8
5	Նույնը ձեռքով կողքի կուտակումով, կողնակների լիցքի համար	մ³	23.1	5	115.5
6	Խճային հիմք h=16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	3945	2.5	9862.5
7	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	3945	6.80	26826
8	Կողնակների լցնում բուլդոզերով տեղափոխումով 10 մ (ջրում, խտացում) h=5սմ	մ³	23.1	2.5	57.75
9	P65 հին երկաթգծի ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը	գծմ	30	3	90
10	Կողային առվի մաքրում	գծմ	444	0.5	222
	// Մայթեր				0
1	Գոյություն ունեցող բազալտե 15x30սմ եզրաքարերի քանդում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ	գծմ	154	1.1	169.4
2	Գոյություն ունեցող բետոնե 15x30սմ եզրաքարերի քանդում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ	գծմ	295	0.8	236
3	Միաձույլ բետոնե 10x20 եզրաշարի քանդում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ	գծմ	185	0.6	111
4	Մայթի հին ա/բ ծածկի քանդում բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ	մ²	1029	0.7	720.3
5	Եզրաքարերի տեղադրման տեղամասերի հանույթ 10eIV բնահողերում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ	մ³	38.4	3.6	138.24
6	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում B-20 բետոնե հիմքի վրա 100գծմ - 3.5մ³	գծմ	514	12.5	6425
7	Միաձույլ բետոնե 10x20սմ եզրաշար B20	գծմ	258	3.3	851.4
8	Մայթի ավազակոպճային հիմք հմիջ=6սմ	մ²	1078.9	0.45	485.505
9	Մայթի ծածկ h=3սմ ավազային ա/բ	մ²	1078.9	3.8	4099.82
	/// Իջատեղեր				0
1	10eIV կարգի բնահողի մշակում 0.65մ3 էքս., բարձում ա/ի, տեղափոխում 9կմ լցակույտ:	մ³	13.6	3.6	48.96
2	Նույնը կողքի կուտակումով հետագա օգտագործման համար	մ³	11	0.7	7.7
3	Հողային պատառի հարթեցում ավտոգրեյդերով:	մ²	193.57	0.15	29.0355
4	Խճային հիմքի տեղադրում h=12սմ	մ²	193.57	1.10	212.927
5	Մանրահատիկ ա/բ h=5սմ:	մ²	193.57	6.80	1316.276
6	Լցովի կողնակներ կողքի կուտակված 10eIV բնահողից հմիջ=10սմ բուլդոզերով տեղափոխում 10մ (ջրում, խտացում)	մ²	110.0	0.2	22
	Ջրընդունիչ վաքեր իջատեղերում				0
7	Փոսորակի փորում 10eIV բնահողում 0.65մ³ էքս. կողքի կուտակումով:	մ³	13.68	0.70	9.576
8	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ³	1.68	5.6	9.408
9	Միաձույլ ե/բ վաքեր B20 - ամրան Մ14A500C (149.04գծմ/180.06կգ)	մ³	6.27	165	1034.55
10	Քսվածքային ջրամեկուսացում բիտումով	մ²	21.6	2.0	43.2
11	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	2.88	3	8.64
12	Ավելացած գրունտի բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 9կմ:	մ³	10.8	3.6	38.88

13	Մետ. ցանց ∟100x10 (36գծմ/543.6կգ) ∟90x9 (36գծմ/439.2կգ) ∟90x9 (18.72գծմ/228.39կգ) Մ25A500C (103.68գծմ/399.48կգ)	տ	1.61067	900	1449.603
	IV Մետաղական խողովակ d=720x8մմ, ջրհոր, ջրընդունիչ				0
1	Ա/բ ծածկի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ հեռավորության վրա:	մ³	3.02	3.6	10.872
2	Խողովակի տեղադրման համար փոսորակի իրականացում հողային պաստառի քանդում էքս. 0.65 շտ, կողքի կուտակումով - 10eIV:	մ³	123.68	0.8	98.944
3	Նույնը՝ ձեռքով:	մ³	13.0	7.0	91
4	Գոյություն ունեցող պատի միաձույլ բետոնի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 9 կմ հեռավորության վրա:	մ³	0.86	3.6	3.096
5	Ձեռքով համահարթեցման աշխատանքներ:	մ²	37.6	0.5	18.8
6	Խողովակի տեղադրման համար խճային բարձիկի իրականացում	մ³	15.36	12	184.32
7	D=720 մմ պողպատե խողովակի տեղադրում - d=8 մմ:	գմ	23	120	2760
8	Մետաղական խողովակի գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	գծմ	22.0	2.2	48.4
9	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	0.86	85	73.1
10	Հետլիցք բուլդոզերով ջրումով և շերտ շերտ տոփանումով:	մ³	96.75	1.5	145.125
11	Նույնը՝ ձեռքով	մ³	9.5	3	28.5
12	Ավելնորդ գրունտի բարձում ա/ի 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV, տեղափոխում լցակույտ 9 կմ հեռ վրա:	մ³	30.43	3.6	109.548
	Ջրհորի իրականացում				0
1	Անձրևահորի իրականացման համար փոսորակների փորման հողային աշխատանքներ 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV:	մ³	3.6	0.7	2.52
2	Նույնը ձեռքի աշխատանքով կողքի կուտակումով:	մ³	0.4	5	2
3	Ջրհորի տակ h=10 սմ ավազակոպճային շերտի տեղադրում:	մ³	0.14	5.60	0.784
4	Ջրհորի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով, ամրան & 14մմ A500c - L=10.92 մ P=13.2 կգ:	մ³	1.64	180.00	295.2
5	Կափարիչի (ցանցի) իրականացում այդ թվում. ∟100x10 L=2.0 մ P=30.2 կգ, ∟90x9 L=3.04 մ P=37.09 կգ, &25 A500c L=14 մ P=22.19 կգ,	տ	0.0895	1100	98.45
6	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում (2 շերտ):	մ²	6.65	2.20	14.63
7	Հետլիցք ձեռքով՝ ջրումով և շերտ շերտ տոփանումով:	մ³	2.18	3.5	7.63
8	Ավելնորդ գրունտի բարձում ա/ի 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV, տեղափոխում լցակույտ 8 կմ հեռ վրա:	մ³	1.82	3.4	6.188
	Ջրընդունիչ				0
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,65մ³ շ.տ. կողքի կուտակումով:	մ³	8.0	0.81	6.48
2	Նույնը՝ ձեռքով	մ³	1.1	5.0	5.6
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	1.12	5.60	6.272

4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան & 14մմ A500c -120.04 կգ:	մ³	4.18	176.00	735.68
5	Ցանցի իրականացում ամրան & 25մմ A500c - L=69.12 մ, P=266.32 կգ Անկյունակ L 100x10մմ - L=24 մ, P= 362.4 կգ Անկյունակ L 90x9մմ - L=36.48 մ, P=445.06 կգ	կգ	1073.78	1.15	1234.847
6	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	14.4	2.2	31.68
7	Հետլիցք ձեռքով	մ³	1.92	3.00	5.76
8	Ավելացած գրունտի բարձում ա/հ էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 9 կմ հեռ. վրա:	*մ³*	*7.2*	*3.6*	25.92
	Ընդամենը՝Ներառյալ շահույթը, վերադիր ծախսերը և ԱԱՀ (հազար ՀՀ դրամ)				**221450.00**

Չափաբաժին 2

Հազար ՀՀ դրամ

Կապան քաղաքի Գր. Արզումանյան փողոցից Բեխ թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգում

NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումարը
	I Հողային աշխատանքներ				
1	Ա/բ ծածկի քանդում էքսկ. 0,65 մ³ շ.տ. բարձում ա/հ տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	200	3.60	720
2	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/հ տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	750	3.50	2625
3	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/հ տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	53.11	7.00	371.77
4	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/հ տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	100	3.70	370
	II Երթևեկային մաս				0
1	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ	մ²	4283	1.50	6424.8
2	Խճավազային հիմք h=10սմ (C-5), 100մ²-ի համար՝ խիճ (40-70)-1,3մ³ խիճ (20-40)-4,55մ³ խիճ (10-20)-2,6մ³ խիճ (5-10)-1,3մ³ խիճ (0-5)-3,25մ³ (ավազ) ջուր-1.1մ³	մ²	4283	1.75	7495.6
3	Սև խիճ h=4սմ	մ²	4283	0.80	3426.56
4	Մանրահատիկ ա/բ h=4 սմ	մ²	4283	5.20	22272.64
	III Պարապետների կոնստրուկցիան				0
1	*Գոյություն ունեցող հենապատերի վրա խարսխային ձողեր տեղադրելու համար ուղղահայաց անցքերի գայլիկոնում- d40մմ, L_1=30 սմ:*	*հատ*	*30*	*0.8*	24
2	*Գոյություն ունեցող հենապատերի վրա ամրանային խարիսխների տեղադրում &20A500c , L_1=80 սմ: էպոքսիդացեմենտային շաղախ - 0.0086 մ³:*	*տ*	*0.059*	*750.00*	44.4
3	*Պարապետների իրականացում B20 դասի միաձույլ բետոնով:*	*մ³*	*14.40*	*85.00*	1224
4	*Պարապետների երեսային մակերևույթների սվաղ M200 մակնիշի ցեմ. շաղախով, b=3 սմ:*	*մ²*	*99.6*	*3.30*	328.68

5	*Պարապետների ներկում:*	*մ²*	*99.6*	*2.00*	199.2
Կապան քաղաքի Գր. Արզումանյան փողոցի I նրբանցքից մինչև Բեխ թաղամաս տանող ճանապարհի հետ հատվող փողոցի հիմնանորոգում					
NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումարը
	I Հողային աշխատանքներ				
1	Ա/բ ծածկի քանդում էքսկ. 0,65 մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	23.6	3.50	82.6
2	Բազալտե սալիկներով ճանապարհային ծածկի քանդում ձեռքի աշխատանքով և վերադարձ սեփականատիրոջը	մ²	74	1.00	74
3	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	320	3.50	1120
4	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	48.28	7.00	337.96
5	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	50	1.00	50
	II Երթևեկային մաս				0
1	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ	մ²	1697	1.50	2545.05
2	Խճավազային հիմք h=10սմ (C-5), 100մ²-ի համար՝ խիճ (40-70)-1,3մ³ խիճ (20-40)-4,55մ³ խիճ (10-20)-2,6մ³ խիճ (5-10)-1,3մ³ խիճ (0-5)-3,25մ³ (ավազ) ջուր-1.1մ³	*մ²*	1697	1.75	2969.225
3	Սև խիճ h=4սմ	մ²	1697	0.80	1357.36
3	Մանրահատիկ ա/բ h=4 սմ	մ²	1697	5.20	8822.84
	III Վաքերի տեղադրում				0
1	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ)	մ³	5.9	1.20	7.08
2	Ե-1-20-50 վաքերի ջրամեկուսացում	մ²	112.1	2.00	224.2
3	Ե-1-20-50 վաքերի տեղադրում	հատ	118	14.70	1734.6
	IV Դիտահորեր				0
1	Դիտահորի ոչ պիտանի բետոնյա սալի ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 12.0 կմ միջին հեռ. (գոյություն ունեցող 1 հատ թուջե կափարիչը պահպանվում է հետագա օգտագործման համար)	հատ	1	5.00	5
2	Դիտահորի նոր սալի տեղադրում (1,2x1,2), հին թուջե կափարիչի օգտագործումով	հատ	1	38.00	38
	V Խողովակի նորոգում				0
1	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. կողքի կուտակումով:	մ³	3.0	0.70	2.1
2	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով՝ կողքի կուտակումով:	մ³	0.6	5.00	3
3	Գլխամասի B20 դասի միաձույլ բետոն:	մ³	1.23	115.00	141.45
4	Հետլիցք ձեռքով՝ ջրումով և խտացումով:	մ³	2.37	0.50	1.185
5	Ավելնորդ բնահողի էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	1.23	3.50	4.305
	VI Պարապետի տեղադրում				0

1	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. կողքի կուտակումով:	մ³	34.4	0.70	24.08
2	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով՝ կողքի կուտակումով:	մ³	*3,8*	*5.00*	19
3	Ավազակոպճային նախապատրաստական շերտ- h=10սմ	մ³	*3.85*	*5.60*	21.56
4	Պարապետի հիմքի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով:	մ³	*14.0*	*75.00*	1050
5	Պարապետի իրանի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով:	մ³	*22.4*	*85.00*	1904
6	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ²	*104.3*	*2.00*	208.6
7	Պարապետների երեսային մակերևույթների սվաղ M200 մակնիշի ցեմ. շաղախով, b=3 սմ:	մ²	*137.2*	*3.00*	411.6
8	Պարապետների ներկում:	մ²	*137.2*	*2.00*	274.4
9	Հետլիցք ձեռքով՝ ջրումով և խտացումով:	մ³	12.2	0.50	6.1
10	Ավելնորդ բնահողի էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ³	26.0	3.50	91
Կապան համայնքի Ա.Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի և 1;2;3;4;5 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների					
NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը		
	I.ճանապարհային հագուստ				
1	Գոյություն ունեցող ճան. հագուստի քանդում էքսկ. 0.65մ³ շեր. տար., բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	616	3.50	2156
2	Նույնը ձեռքի աշխատանքով, էքսկ. 0.65մ3 շեր. տար.բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	10	7.00	70
3	ճան. հագուստի քանդում բուլդոզերով, տեղափոխում մինչև 20մ կուտակումով , էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	401	3.70	1483.848
4	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ²	2934	0.56	1643.264
5	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով	մ²	2934	2.40	7042.56
6	Խոշորահատիկ ա/բ շերտի տեղադրում h=6սմ	մ²	2934	6.85	20100.64
7	Մանրահատիկ ա/բ շերտի տեղադրում h=4սմ	մ²	2934	5.20	15258.88
	II.Մուտքեր				0
1	10eIV բնահողի քանդում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	94.95	3.50	332.325
2	Նույնը ձեռքի աշխատանքով, էքսկ. 0.65մ3 շեր. տար. բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	10.55	7.00	73.85
3	Հողային պաստառի հարթեցում ձեռքի աշխատանքով	մ²	659.2	0.50	329.6
4	Խճային հիմքի տեղադրում h=12սմ	մ²	659.2	1.20	791.04
5	Մանրահատիկ ա/բ շերտի տեղադրում h=5սմ	մ²	659.2	6.80	4482.56
	III.Մայթեր				0
1	Մայթերի վրա կուտակված III կարգի բնահողի բարձում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	16.12	3.50	56.42
2	Բազալտե եզրաքարերի 15x30սմ քանդում , էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	գծ.մ	414	1.10	455.4

3	Մայթի հագուստի քանդում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	58	3.50	203
4	Մայթի ա/բ ծածկի քանդում ձեռքի աշխատանքով, էքսկ. 0.65մ3 շեր. տար.բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ²	71	0.50	35.5
5	Նույնը հիմքի քանդում ձեռքի աշխատանքով, էքսկ. 0.65մ3 շեր. տար.բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	4.26	7.00	29.82
6	Բազալտե 15x30սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-3,5մ³	գծ.մ	622.9	12.50	7786.25
7	Բազալտե 10x20սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-5,0մ³	գծ.մ	244.0	8.00	1952
8	Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ	մ²	712.1	1.05	747.705
9	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	712.1	3.80	2705.98
	IV.Սալվածք				0
1	Շենքերի սալվածքների քանդում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	160.0	3.50	560
2	Սալվածքների ա/բ ծածկի քանդում ձեռքի աշխատանքով կողալցումով , բարձում էքսկ. 0,65 մ³ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ²	640	0.50	320
3	Նույնը հիմքի քանդում ձեռքի աշխատանքով կողալցումով, էքսկ. 0.65մ3 շեր. տար.բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	76.8	8.00	614.4
4	Բազալտե 10x20սմ եզրաքարերի համար խրամուղու քանդում ձեռքի աշխատանքով , բարձում էքսկ. ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	16.85	5.00	84.25
5	Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ	մ²	1706	1.05	1791.405
6	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	1706	3.80	6483.18
7	Բազալտե 10x20սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-5,0մ³	գծ.մ	280.9	8.00	2247.2
	V.Շենքերի բակային տարածքներ				0
1	Երթևեկելի մասի գոյություն ունեցող ճան. հագուստի քանդում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	788.3	3.50	2759.05
2	Նույնը ձեռքի աշխատանքով, էքսկ. 0.65մ3 շեր. տար. բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	65	7.00	455
3	Ճան. հագուստի քանդում բուլդոզերով, տեղափոխում մինչև 10մ կուտակումով , էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	522.7	3.80	1986.108
4	Մայթի հագուստի քանդում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	52	3.50	182
5	Մայթի ա/բ ծածկի քանդում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ²	38.6	0.50	19.3
6	Նույնը հինքի քանդում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	4.6	7.00	32.2
7	Բազալտե եզրաքարերի 15x30սմ քանդում , էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	գծ.մ	662.6	1.10	728.86
8	Բետոնե եզրաքարերի 15x30սմ քանդում , բարձում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	գծ.մ	58.1	0.80	46.48
9	Մետաղական կիսախողովակի d=325մմ ապամոնտաժում , վերադարձ սեփականատիրոջ	գծ.մ	17.0	5.00	85
10	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ²	4587	0.56	2568.468
11	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով	մ²	4587	2.40	11007.72
12	Մանրահատիկ ա/բ շերտի տեղադրում h=5սմ	մ²	4587	6.80	31188.54

13	Բազալտե 15x30սմ եզրաքարերի համար խրամուղու քանդում ձեռքի աշխատանքով , բարձում էքսկ. ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 12.0 կմ	մ³	45.77	7.00	320.39
14	Բազալտե 15x30սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-3,5մ3	գծ.մ	832.2	12.50	10402.5
15	Ծառաբների բազալտե 10x20սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-5,0մ3	գծ.մ	3.5	8.00	28
16	Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ	մ²	385.3	0.70	269.71
17	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	385.3	3.80	1464.14
18	Վաքերի ավազակոպճային նախատրաստական շերտ h=5սմ	մ³	0.16	5.60	0.896
19	Վաքերի հատակի միաձույլ բետոն h=15սմ B20	մ³	0.48	128.37	61.6176
	VI. Դիտահորեր				0
1	Դիտահորերի նոր 1,2x1,2մ ե/բ սալերի տեղադրում թուջե կափարիչով	հատ	4	125.00	500
	Ընդամենը՝ներառյալ շահույթը, վերադիր ծախսերը և ԱԱՀ (հազար ՀՀ դրամ)				**213000.00**

Աշխատանքներն իրականացվում են կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերին համաձայն, բարձր որակով, աշխատանքի ընթացքում հաշվի են առնվում լաբորատոր փորձարկումները,

Կապալառուն աշխատանքները կատարում է Կապան համայնքի ըստ ծավալաթերթում նշված հասցեների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ115001829536538 0
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

29 հոկտ Հավելված թիվ 2
2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Գեղանուշ բնակավայր տանող ճանապարհի, Հարությունյան փողոցի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25
3	Գր. Արզումանյան-Բեխ ճանապարհահատված, Գր. Արզումանյան փողոցի I նրբանցքից մինչև Բեխ թաղամաս տանող ճանապարհի հետ հատվող փողոցի, Ա.Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի և 1;2;3;4;5 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ1150018295365380
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
29 հոկտ. 2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը, հաշվեհամար, գումար			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
					օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177-1	Գեղանուշ բնակավայր տանող ճանապարհի, Հարությունյան փողոցի վերանորոգման աշխատանքներ	900312512040	221450000	88580000	88580000	88580000	88580000	88580000	88580000
			900312000491		132870000	132870000	132870000	132870000	132870000	132870000
3	45231177-3	Գր. Արզումանյան-Բեխ ճանապարհահատված, Գր. Արզումանյան փողոցի I նրբանցքից մինչև Բեխ թաղամաս տանող ճանապարհի հետ հատվող փողոցի, Ա.Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի Ա 1;2;3;4;5 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	900312512040	213000000	85200000	85200000	85200000	85200000	85200000	85200000
			900312000491		127800000	127800000	127800000	127800000	127800000	127800000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ1150018295365380
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

29 հոկտ Հավելված թիվ 4
2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

, , *ե 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ ,_____ 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ , ե , ե 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

29 հոկտ

Հավելված 4.1
2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն